ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-17/25-I/INSTPHYSIOL

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Նաիրա Մարտինի Այվազյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 290 266 400 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից 11,219.0 հազար դրամ հատկացնել կազմակերպությունում նոր աշխատողների ընդգրկմամբ նոր գիտական ստորաբաժանումների ստեղծմանը,

2.4.3.2 բացառել Ծրագրի ֆինանսավորման ծավալը նվազելու պատճառաբանությամբ արդյունավետ աշխատող գիտական աշխատողների աշխատանքային պայմանների վատթարացումը,

2.4.3.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից բացառել վարորդի աշխատավարձի և ծառայողական մեքենայի հետ կապված որևէ ծախս, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսեր,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ աետության կարիքների համար կատարվող գնումների

կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 290 266 400 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Հայաստան, ք.Երևան, Օրբելի Եղբ. 22, Հ/հ՝ 900018005620 ՀՎՀՀ՝ 00008543 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ Կ.Տ. (ստորագրություն)	Կազմակերպության տնօրեն՝ Կ.Տ. (ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Նաիրա Մարտինի Այվազյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) Այվազյան Նաիրա Մարտինի

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Նաիրա Մարտինի Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 290 266 400 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

_____ Կ.Տ.
(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սաղյան

Կազմակերպություն

տնօրեն՝

_____ Կ.Տ.
(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Այվազյան

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	28
Այլ պարբերականում հրապարակում՝	17
Գրքեր, մենագրություններ՝	3
Գիտաժողովի նյութեր՝	60

Կազմակերպության տնօրեն՝ _____ Նաիրա Մարտինի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Ներոգովա Քրիստինա Ալեքսանդրի
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	280 583 752	56 116 750	70 145 938	70 145 938	84 175 126
2.	տնտեսական ծախսեր՝	5 300 000	1 060 000	1 325 000	1 325 000	1 590 000
3.	այլ ծախսեր՝	4 382 648	876 529	1 095 662	1 095 662	1 314 795
Ընդամենը՝		290 266 400	58 053 279	72 566 600	72 566 600	87 079 921

Կազմակերպության տնօրեն՝ _____ Նահրա Մարտինի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Աշխեն Մնացականի Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ. S.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**5 300 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	2 500 000
2.	*գազի ծառայություն*	2 000 000
3.	*ջրամատակարարման ծառայություն*	800 000
4.	*կապի ծառայություն*	0
5.	*աղբահանություն*	0
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**4 382 648**
1.	Պահնորդական ծառայություն	4 382 648

Կազմակերպության տնօրեն՝ _____ Նարիրա Մարտինի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Աշխեն Մնացականի Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-17/25-I/INSTPHYSIOL պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)
B - ամիսների քանակ
C - աշխատաժամանակի ռեժիմ
D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
E - գումարային

<< դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Այվազյան Նաիրա Մարտինի	Տնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Մադաթյան Հովհաննես Արսենի	Փոխտնօրեն	198 000	12	հիմնական	40	2 376 000
Նեբոգովա Քրիստինա Ալեքսանդրի	Գիտ.քարտուղար	125 000	12	հիմնական	20	1 500 000
Հովհաննիսյան Աշխեն Մնացականի	Գլխավոր հաշվապահ	345 000	12	հիմնական	40	4 140 000
Հակոբյան Կարինե Գեղամի	Հաշվապահ	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Կարապետյան Ռուզաննա Արմենակի	Կադրերի ավագ տեսուչ	375 000	12	հիմնական	40	4 500 000
Պետրոսյան Էդգար Վալերիի	Վերելակավար	52 561	2	համատեղություն	20	105 122
Կիրակոսյան Վարազդատ Արևշատի	Պարետ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Կարապետյան Լիաննա Էդուարդի	Քարտուղար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Նաջարյան Արմեն Սերյոժայի	Վարորդ	291 711	2	հիմնական	40	583 422
Օհանյան Սուրեն Սերգեյի	Բանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Պետրոսյան Կարեն Սասունի	Բանվոր	105 121	12	հիմնական	40	1 261 452
Պանչուլազյան Կարեն Կարենի	Բանվոր	93 600	2	հիմնական	30	187 200
Հարությունյան Արման Մնացականի	Բանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Իոնանովա Դոնարա Ալեքսեյի	Հավաքարար	96 591	12	հիմնական	40	1 159 092
Սազբանդյան Լարիսա Այոշայի	Հավաքարար	96 591	12	հիմնական	40	1 159 092
Ասլանյան Աշոտ Վարդգեսի	Սերպենտարիումի վարիչ	194 000	12	համատեղություն	20	2 328 000
Հայրապետյան Անուշ Ջանիբեկի	Կենդանանոցի աշխատող	100 000	12	հիմնական	40	1 200 000
Գասպարյան Մնացական Գասպարի	Կենդանանոցի խնամող	100 000	12	հիմնական	40	1 200 000
Գիտական անձնակազմ						
Լաբորատորիա Կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիա						
Մանվելյան Լևոն Ռաֆայելի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Թերզյան Դիանա Օնիկի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Օհանյան Լիա Ռազմիկի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Գրիգորյան Մարիամ Լևոնի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մադաթյան Հովհաննես Արսենի	Ավագ ճարտարագետ	89 620	12	ներքին համատեղություն	20	1 075 440
Մեղավորյան Ռուբեն Էդուարդի	Ավագ ճարտարագետ	179 239	12	հիմնական	40	2 150 868
Խոյեցյան Նելլի Սոսի	Ավագ լաբորանտ	179 239	12	հիմնական	40	2 150 868

Լաբորատորիա Իմունոլոգիայի և հյուսվածքային ճարտարագիտություն						
Կարաբեկյան Զարուհի Իվանի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Գրիգորյան Վահան Սուրենի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Սևոյան Գոհարիկ Պետրոսի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Պոլիանչիկ Դանիիլ Եվգենիի	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Կալինովսկայա Օլգա Վլադիմիրի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մահսա Քամալի Նասեր	Կրտսեր գիտաշխատող	105 163	12	հիմնական	20	1 261 956
Պոլյակով Միխաիլ Պյոտրի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Լաբորատորիա Հարթ մկանների ֆիզիոլոգիա						
Ղազարյան Քնարիկ Վահանի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Հունանյան Նաիրա Գևորգի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Չիբուխչյան Ռոզա Գարուշի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Փիլիպոսյան Տաթևիկ Արտավազդի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Տրոֆիմովա Յուլիյա Եվգենիի	Գիտաշխատող	275 804	6	հիմնական	40	1 654 824
Մկրտչյան Արուսյակ Վաչիկի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Մկրտչյան Հերմինե Խաչիկի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Լաբորատորիա Թունաբանական հետազոտություն						
Այվազյան Նաիրա Մարտինի	Ղեկավար	238 435	12	ներքին համատեղություն	20	2 861 220
Կիրակոսյան Գայանե Ռաֆայելի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Զաքարյան Նաիրա Արմենի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Ֆեդոտով Սերգեյ Ալեքսանդրովիչ	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Պետրոսյան Մարիամ Սամվելի	Ավագ գիտաշխատող	85 817	12	համատեղություն	10	1 029 804
Ղուլիկյան Լուսինե Ալմիրի	Ավագ գիտաշխատող	171 633	12	հիմնական	20	2 059 596
Թադևոսյան Հասմիկ Հենրիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Քիշմիրյան Արսեն Վլադիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ղուկասյան Գևորգ Վահանի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մաթևոսյան Լուսինե Աշոտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Բասեղյան Արամ Գալուստի	Ավագ ճարտարագետ	179 239	12	հիմնական	40	2 150 868
Լաբորատորիա Զգայաշարժ ինտեգրացիա						
Սարգսյան Վաղինակ Հայկազի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Համբարձումյան Լիլիա Էդիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Դարբինյան Լիլիթ Վահանի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մանուկյան Լարիսա Փայլակի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սարգսյան Նաիրա Վաղինակ	Ավագ լաբորանտ	134 430	12	հիմնական	30	1 613 160
Լաբորատորիա Հիստոքիմիայի և մորֆոլոգիայի						
Դանիելյան Մարգարիտ Հարությունի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Նազարյան Օֆելիա Համբարձումի	Ավագ գիտաշխատող	171 634	2	հիմնական	20	343 268

Կարապետյան Քրիստինե Վանիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մկրտչյան Անուշ Արշակի	Ավագ լաբորանտ	89 620	12	համատեղություն	20	1 075 440
Ազիզյան Նարինե Համլետի	Ավագ լաբորանտ	89 620	12	հիմնական	20	1 075 440
Անտոնյան Ինեսա Վալերիի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Լաբորատորիա Մարդու հոգեֆիզիոլոգիա						
Խաչունց Ալեքսանդր Սերգեյի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Թադևոսյան Նարինե Էդուարդի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Գալստյան Հասմիկ Գրիգորիի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Թումանյան Անուշ Արզանի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սարգսյան Արմեն Ռոբերտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սահակյան Արտյոմ Ալբիկ	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սարգսյան Արմինե Վարդգեսի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Վահրադյան Լիլիթ Վաչագանի	Լաբորանտ	69 117	12	հիմնական	20	829 404
Լաբորատորիա Ինտեգրատիվ կենսաբանություն						
Սարգսյան Ռաֆիկ Շավարշի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Քարամյան Գագիկ Գուրգենի	Ավագ գիտաշխատող	171 633	12	հիմնական	20	2 059 596
Սիմոնյան Լուիզա Գագիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սարգսյան Վահրամ Ռաֆայելի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մանուկյան Արմեն Միսակի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Կոստանյան Հասմիկ Լավրենտիի	Կրտսեր գիտաշխատող	52 581	12	համատեղություն	10	630 972
Միսակյան Լևոն Հրաչի	Ավագ ճարտարագետ	44 810	12	հիմնական	10	537 720
Լաբորատորիա Նյարդաներզատչական փոխհարաբերություններ						
Զավուշյան-Պապյան Վերգինե Անդրանիկի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Սիմոնյան Կարեն Վազգենի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Ավետիսյան Լիլիթ Գագիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Իսոյան Արմինե Սամվելի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ավետիսյան Ռիմա Ավետիսի	Ավագ լաբորանտ	179 239	12	հիմնական	40	2 150 868
Լաբորատորիա ԿՆՀ ֆունկցիաների փոխհատուցման ֆիզիոլոգիա						
Սարգսյան Ջոն Սարգսի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Ավետիսյան Զուբեյդա Ալեքսանի	Ավագ գիտաշխատող	343 267	6	հիմնական	40	2 059 602
Պողոսյան Միխաիլ Վալերիի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ստեփանյան Հարություն Յուրիի	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Ցականյան Կարեն Վասիլի	Ավագ ճարտարագետ	179 239	12	հիմնական	40	2 150 868
Ավետիսյան Աստղիկ Վարուժանի	Ավագ լաբորանտ	179 239	12	հիմնական	40	2 150 868
Կենտրոն Հեռավար ուսուցման կենտրոն						
Ավետիսյան Էլմիրա Ալեքսանդրի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204

Պետրոսյան Անահիտ Աղվանի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Կարապետյան Անահիտ Գևորգի	Ավագ գիտաշխատող	171 633	12	հիմնական	20	2 059 596
Նեբոգովա Քրիստինա Ալեքսանդրի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Պողոսյան Ռուդոլֆ Անդրեյի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Մելտոնյան Աշոտ Վարազդատի	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Պետրոսյան Սոսե Սամվելի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Լաբորատորիա Ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի զտման, սերտիֆիկացման եւ ստանդարտիզացման լաբորատորիա						
Ոսկանյան Արմեն Վաղինակի	Ղեկավար	476 869	12	հիմնական	40	5 722 428
Դարբինյան Աննա Աշոտի	Ավագ գիտաշխատող	343 267	12	հիմնական	40	4 119 204
Մողրովյան Արմենուհի Վաչագանի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Պարսեղյան Լիլյա Մուշեղի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Բաբաջանյան Միլենա Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	0	0	հիմնական	40	0
Պողոսյան Սոնա Սամվել	Կրտսեր գիտաշխատող	210 325	12	հիմնական	40	2 523 900
Լաբորատորիա Գերազանցության տարածաշրջանային կենտրոն						
Սարվազյան Նարինե Արմենի	Գլխավոր գիտաշխատող	138 233	12	հիմնական	10	1 658 796
Բայդյուկ Եկատերինա Վիկտորովնա	Ավագ գիտաշխատող	85 817	12	հիմնական	10	1 029 804
Լաբորատորիա Կենսաֆիզիկական հետազոտություններ						
Պետրոսյան Ռաֆայել Պետրեոսի	Ղեկավար	119 217	2	համատեղություն	10	238 434
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						280 583 752

Կազմակերպության տնօրեն՝ _____ Լիլիթա Մարտինի Այվազյան
(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ Հասմիկ Հ. Գասպարյան
(ստորագրություն) (ԱԱՀ)

Կ. S.

Հավելված N 5
«20» հունվարի 2025 թ.
N 1-17/25-1/1NST PH YSIOL պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
«Նյարդային համակարգի ինտեգրատիվ,պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:
Կիրառելով ժամանակակից էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական, ինչպես նաև՝ կենսապատկերավորման զանազան մեթոդներ, ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկ, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման
խորքային մեխանիզմները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական հետազոտությունները նվիրված են կենտրոնական, վեգետատիվ և ծայրամասային նյարդային համակարգերի գործունեության հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման ու համապատասխան բնագավառներում ներդրման հարցերին: Ինստիտուտը՝ հանդիսանալով ֆիզիոլոգիական հետազոտությունների կոորդինացնող կենտրոն ՀՀ գիտակրթական համայնքում, պարտավորվում է նշված ուղությամբ իրականացնել հեռանկարային ու ցպահանջ հետազոտություններ: Ինստիտուտի խմբերի ուսումնասիրությունները մեծամասամբ լիովին վերածածկում են նյարդաֆիզիոլոգիայի հիմնական ուղղությունները, ներգրավելով նաև ժամանակակից մոլեկուլային կենսաբանական, կենսաֆիզիկական և մանրադիտման մեթոդական մոտեցումները՝ էլեկտրոֆիզիոլոգիա, նյարդադեգեներատիվ և քաղցկեղային պաթոլոգիաների կենդանական մոդելներ, վարքագծային թեստեր, արհեստական թաղանթների ձևավորում, լուսային, ֆազ-կոնտրաստ, ֆլուորեսցենտային, էլեկտրոնային, ատոմային-ուժային և կոնֆոկալ մանրադիտում, հյուսվածքների աճեցում բջջային կուլտուրաների միջոցով, ինչպես նաև հիպերսպեկտրալ և տրանսմիսիոն էլեկտրոնային կենսապատկերավորման մեթոդներով: Նոր մոտեցումներից է դեղորայքների նախատիպերի սքրինինգը 3D-AI միջոցով:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական փորձաքննությունը ավանդորեն վերածածկում է նյարդաֆիզիոլոգիայի և նեյրոգիտությունների ոլորտը: Դրա հետ մեկտեղ աշխատանք է տարվում դասական

մեթոդաբանության արդիականացման և նոր մոտեցումների մշակման ուղղությամբ: Լինելով Հայաստանի կենսաբժշկագիտական և ֆիզիոլոգիական առավել խոշոր կառույցը՝ Ինստիտուտը զարգացնում է նաև այլ ժամանակակից ուղղություններ, ինչպիսիք են թունաբանությունը, կենսաֆիզիկան, հյուսվածքային ինժեներիան և կենսապատկերավորման տարբեր ուղղությունները:

Նյարդաֆիզիոլոգիայի ուղղությամբ իրականացվելու են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- շարունակել ուսումնասիրություններ Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) զարգացման մեխանիզմները գնահատելու, ինչպես նաև բակտերիալ մելանինի (ԲՄ) ազդեցությունը գնահատել նախկինում ստացված արդյունքների հետ: Կիրականացվեն կենդանիների վարքագծային թեստեր: Բացի այդ, այս մոդելները կօգտագործվեն նյարդային հյուսվածքի և աղիների կենսաքիմիական վերլուծությունների, ինչպես նաև ձևաբանաչափական հետազոտությունների նպատակով՝ ուղեղի միկրոանոթային հունի վիճակը գնահատելու նպատակով:

- ուղեղի strio-pallidar համակարգի կառուցվածքների փոխադարձ հարաբերությունների հետագա ուսումնասիրություն Ալցհեյմերի հիվանդության (ԱՀ) մոդելի վրա: Ինչպես նաև հիշողության հայտնի կառույցների և դրանց փոխադարձ հարաբերությունների ուսումնասիրությունը՝ ԱՀ մոդելի վրա ուղեղի էնտորինալ կեղևի ուսումնասիրությամբ:

- ողնուղեղի պարանոցային և գոտկային հատվածներ ուղորդվող ցանցա-ողնուղեղային նեյրոնների ռեակցիաների մանրակրկիտ էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունը՝ ի պատասխան ուղեղիկի կեղևի առուրիկուլյար բլթակի գրգռման: Խնդիրն է՝ իրականացնել ուղեղիկի կողմից արգելակվող միջակա ցանցաձև գոյացության ողնուղեղի պարանոցային և գոտկային հատվածներ ուղորդվող նեյրոնների քանակական և որակական հետազոտություն:

- հարթ մկանային հյուսվածքի ֆիզիոլոգիայում հետազոտական նպատակն է՝ այդ մկանային հյուսվածքում ինքնաբուխ էլեկտրական ակտիվության ծագման մեխանիզմների բացահայտումը, ուսումնասիրել արգանդի փողերում, արգանդում և արգանդի վզիկում տեղայնացված տարբեր ինքնավար ռիթմածին շրջանների փոխազդեցության մեխանիզմները, որոնք ապահովում են ոչ հղի առնետների ամբողջ օրգանի ֆունկցիոնալ գործունեությունը:

- բարձր խտությամբ ֆրուկտոզի ջրային լուծույթ երկարատև օգտագործող կրծողների փորձարարական մոդելում (մարդկանց մետաբոլիկ համախտանիշի ախտանիշները նմանակելու նպատակով՝ առաջացած անբարենպաստ սննդի ինտենսիվ օգտագործման հետևանքով) բացահայտել նեյրոնային ցանցերի խաթարումների ֆունկցիոնալ էլեկտրաֆիզիոլոգիական բնութագրերը, ինչպես նաև էնդեմիկ ֆիտոհավաքածուների պաշտպանիչ ներուժի ցուցիչների առանձնահատկությունները և համեմատել այդպիսինները կլինիկորեն հաստատված ացետիլխոլինէսթերազի արգելակիչի ակտիվությամբ օժտված գալանտամին դեղամիջոցի հետ:

Հյուսվածքային ինժեներիայի ուղղությամբ ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- կատարելագործել նյարդային հյուսվածքի իմպլանտների ստացման մեթոդները՝ համադրելով հյուսվածքային ինժեներիայի մեթոդները մի քանի առաջադեմ տեխնոլոգիաների հետ:
- ուսումնասիրել և գնահատել հենարանների հիմնական ցիտոտոքսիկությունը, մնացորդային ԴՆԹ-ի, այլ հայտնի իմունոգենների քանակը ապաբջջայնացված հենարաններում:
- ուսումնասիրել ստացված լյարդի հենարանների իմունոգենությունը, T լիմֆոցիտների *in vitro* տարբերակման մեթոդով:
- ստանալ և բնութագրել բնական ապաբջջայնացած առնետի երիկամի սկաֆոլդ որպես առաջին էական քայլ ամբողջական օրգանը վերստեղծելու համար:
- բնութագրել ստացված ոչ իմունոգեն, կենսահամատեղելի մաշկի սկաֆոլդները, որոնք կծառայեն որպես մաշկի փոխարինիչ փոխպատվաստման համար: Հետազոտության խնդիրներն են՝ իրականացնել խոզի բարակ աղիքի ապաբջջայնացում, ստացված սկաֆոլդի ցիտոտոքսիկության, իմունոգենության և մնացորդային ԴՆԹ-ի գնահատում:

Մարդու հոգեֆիզիոլոգիայի ուղղությամբ իրականացվելու են հետևյալ ուսումնասիրությունները.

- գնահատել հետազոտվողների կոգնիտիվ գործընթացների մակարդակը տարբեր պայմաններում:
- իրականացնել փոքր լաբորատոր կենդանիների (առնետներ, մկներ, Danio rerio ձկներ (Zebrafish)) շարժողական ակտիվության գրանցման համակարգի մոդիֆիկացիա և կատարելագործում: Գնահատվելու է կենդանիների վարքագծային բնութագրերը գրանցելու և վերլուծելու գործընթացում PSI ֆիրմայի կողմից մշակված SFCO հիդրոֆոն տվիչների կիրառելիության հեռանկարայնությունը:
- գնահատել հետպատերազմային սթրեսների արտահայտվածության աստիճանը և ուսումնասիրել դրանց վեգետատիվ դրսևորումների հոգեֆիզիոլոգիական կորելյատները պոլիգրաֆիկ գրացման միջոցով:
- վիրտուալ իրականության (VR) տեխնոլոգիայի կիրառմամբ մոդելավորել առավել արտահայտված հոգեհուզական տեղաշարժեր առաջացնող տարբեր իրավիճակներ և ուսումնասիրել առաջացած հույզերի վեգետատիվ դրսևորումների հոգեֆիզիոլոգիական կորելյատները:

Թունաբանական հետազոտությունները ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- անդրկովկասյան գյուրզայի խայթոցի դեմ ստացված ֆունկցիոնալ և բարձր էֆեկտիվ հակաթույնի նախակլինիկական թեստավորումը:
- հետազոտել ազդեցության մեխանիզմները՝ հակացավային, հակաբորբոքային ազդեցություն ունեցող ընտրված կենդանական թույների բաղադրամասերի և էնդեմիկ դեղաբույսերի հիման վրա ստեղծված նոր դեղամիջի քսուկ և պատչ տարբերակների համար:
- բացահայտել հակաուռուցքային, հականյարդադեգեներատիվ ազդեցություն ունեցող ընտրված կենդանական թույների բաղադրամասերի պոտենցիալը, և հետազոտել ազդեցության մեխանիզմները՝ նոր դեղամիջոց ստեղծելու նպատակով:

-գնահատել վերը նշված նյութերի կիրառման ժամանակ օրգանիզմի ֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները, տարբեր օրգանների միկրոշրջանառության փոփոխությունը, գլխուղեղի հյուսվածքում միկրոգլիալ բջիջների ակտիվության փոփոխությունը, կենդանիների վարքագծային դրսևորումները:

Նորաստեղծ լաբորատորիաներում ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

Կենսաֆիզիկական հետազոտությունների լաբորատորիան կիրականացնի երկարաժամկետ մոլեկուլային հիշողության մեխանիզմների ուսումնասիրություն, ինչպես նաև բնության մեջ առավել կարևոր կենսական գործառույթներ իրականացնող սպիտակուցների հետազոտություն՝ միահատ մոլեկուլների ուժային սպեկտրոսկոպիայի և հաշվողական մեթոդների կիրառմամբ:

Վիրաբուժական թիրախների հիպերսպեկտրալ պատկերման լաբորատորիան զբաղվելու է նոր սպեկտրային պատկերավորման գործիքների մշակումով՝ տարբեր կլինիկական համապատասխան թիրախների և պաթոլոգիական պայմանների պատկերավորման և քանակականացման համար: Կուսումնասիրվի նաև սրտի քրոնիկ անբավարարության դեպքում սրտամկանի զրգռում-կծկում իրականացնող բաժինների վերափոխումը

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
«20» հունվարի 2025 թ.
N 1-17/25-1/INSTPHYSIOL պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ,պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (1 փուլ)	Ուսումնասիրել օրգանիզմի շարժողական ֆունկցիոների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվու պլաստիկական մեխանիզմները	Փորձերի կատարում առնետների, մկների, ճագարների և բջջային կուլտուրաների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական մաթեմատիկական և այլ ընտրանքային մեթոդները:	Հունվար-մարտ 2025թ.
2	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (2 փուլ)	Շարունակել օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիոնների կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմների ուսումնասիրությունը: Սթրես և Վարքագիծ միջազգային գիտաժողովի կազմակերպում:	Փորձերի կատարում առնետների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրաֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Ապրիլ-հունիս 2025թ.
3	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (3փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ զուգորդված կիրառական բլոկով և ուսումնական ակտիվությամբ (կենսապատկերավորման ամառային միջազգային դպրոց)	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա՝ կիրառելով ժամանակակից կենսապատկերավորման,, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Հուլիս-սեպտեմբեր 2025թ.
4	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (4 փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ զուգորդված կիրառական բլոկով: Կենսապատկերավորման միջազգային գիտաժողովի կազմակերպում: Հաշվետվությունների շրջան:	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա՝ կիրառելով ժամանակակից կենսապատկերավորման,, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Հոկտեմբեր-դեկտեմբեր 2025թ.

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (__Նաիրա Այվազյան___)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____Նաիրա Այվազյան____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)